ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ _639
«11 » հոկտեմբերի 2021թ.

«Պստո» ՍՊԸ տնօրեն
պարոն Ս. Հովհաննիսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
պայմանագրի միակողմանի լուծման մասին

19.07.2021թ. կնքված ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից 10.09.2021թ համաձայնագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «Պստո» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, սակայն Ձեր ընկերության կողմից առ այսօր չի ներկայացվել համաձայնագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետը՝ Լոռի Բերդի համայնքապետարանը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման և որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրերի 1.3 կետերի՝ նշված համաձայնագրերը կից վճարման պահանջագրերով կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու նպատակով և կնախաձեռնվի «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական գործընթաց:

Պատվիրատուի ղեկավար՝ Ա. Ներսիսյան

Կատարող՝ գնումների համակարգող՝ Մ. Հովսեփյան
հեռ. 093-22-10-52